ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

#29

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017

Նորություններ

Հետազոտություններ

Միջոցառումներ

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ «ՀԱՆՈՒՆ ՀԶՈՐ ԱՊԱԳԱՅԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, իր նոր ռազամավարության շրջանակներում, շարունակում է աջակցել նորաստեղծ խմբերի և կառուցների հզորացմանը՝ ի նպաստ Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ համայնքի:

Այս անգամ փոքր դրամաշնորը տրամադրվեց «Հանուն Հզոր Ապագայի» հասարակական կազմակերպությանը, որը ուղղված է աջակցելու կազմակերպության կարողությունների զարգացմանը և ԼԳԲՏԻՔ+ համայնքի տեսանելիության բարձրացմանը :

ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՄԻԱՎ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

Սեպտեմբերի 11-12 Գյումրիում կայացավ 2-օրյա արտագնա աշխատանքային հանդիպում-քննարկում, որը կազմակերպել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում: Հանդիպմանը մասնակցում էին ծրագրի ենթադրամաշնորհառու «Դրական Մարդկանց Հայկական Ցանց», «ՁԻԱՀ-ի Կանխարգելման Միավորում» և «Միացյալ Ուղի» Բարեգործական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում վերը նշված կազմակերպությունների ներկայացուցիչները ներկայացրեցին SUS-ների, տրանսգենդեր անձանց, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, ԹՆՕ-ների և ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների/ապրանքների կարիքի, որակի և առաջնահերթությունների գնահատման վերաբերյալ զեկույցները:

Ծրագրի փորձագետ Միհրան Սևումյանը ներկաների հետ քննարկեց ծրագրի ընթացքում վերհանված կարիքների և ծրագրի թիրախային խմբերի առաջնահերթությունների, նոր առաջարկվող ծառայությունների համադրության տարբերակները, ինչպես նաև անդրադարձավ ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական ծառայությունների որակի և հասանելիության վերաբերյալ ստացված արդյունքները ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի հետ համեմատելու միջոցների մասին: Ծրագրի բյուջետավորման փորձագետ Ահարոն Բարսեղյանը ներկայացրեց բյուջետավորման մեթոդաբանությունը, ինչպես նաև համեմատեց ներկայացված 4 զեկույցների բյուջեն Հայաստանի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի բյուջեի հետ:

Ծրագրի ավարտին կներկայացվի ազգային զեկույց, որը կամբողջացնի SUS-ների, տրանսգենդեր անձանց, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, ԹՆՕ-ների և ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների/ապրանքների կարիքի, որակի և առաջնահերթությունների գնահատման արդյունքները, եզրկացությունները և առաջարկությունները:Հիմք ընդունելով այս զեկույցը՝ կվերանայվի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների պետական բյուջետավորումը:

ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ «ՔԱԼՐՖՈՒԼ ՀԱՈՒՍ» («ԳՈՒՅՆԶԳՈՒՅՆ ՏՆԱԿ») ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, իր նոր ռազմավարության շրջանակներում, շարունակում է աջակցել նորաստեղծ խմբերի և կառույցների հզորացմանը՝ ի նպաստ Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ համայնքի:

Այս անգամ փոքր դրամաշնորհը տրամադրվեց «Քալրֆուլ Հաուս» («Գույնզգույն Տնակ») նախաձեռնող խմբին, որը ուղղված է աջակցելու խմբի իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերմանը, կարողությունների զարգացմանը և տեսանելիության բարձրացմանը: «Քալրֆուլ Հաուս»-ը («Գույնզգույն Տնակ») համայնքահեն նախաձեռնող խումբ է, որի նպատակն է նպաստել հասարակության կողմից առավել խտրականության ենթարկվող խմբերի ինտեգրմանը հասարակության մեջ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2017 թ.-ի սեպտեմբերի 18-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում կայացավ Ռազմավարական տեղեկատվության տարեկան աշխատանքային առաջին հանդիպումը, որին մասնակցում էին միջազգային, պետական և ոչ պետական կառույցների ներկայացուցիչներ:

Աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվեցին ECOM-ի և թիրախային երկրներում ECOM-ի ենթաստացող կազմակերպությունների կողմից իրականացվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում իրականացված բազային գնահատման արդյունքները և քննարկվեցին ռազմավարական տեղեկատվության որակի բարելավման առաջարկների հիմնական ցանկը և SUS ու տրանս անձանց մասնակցությունը ռազմավարական տեղեկատվության ստացման և օգտագործման գործընթացում: Հանդիպման ֆասիլիտատորներն էին "Tanadgoma" ռեպրոդուկտիվ առողջության տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնի ծրագրերի ղեկավար Սերգո Չիխլաձեն և Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) մոնիթորինգի և գնահատման համակարգող Մաքսիմ Կասյանչուկը:*

ՀԶՈՐԱՑԱԾ ՔՀԿ-ՆԵՐ՝ ՀԱՆՈՒՆ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՐԱՆԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ

2017թ.-ի սեպտեմբերի 15-ից 18-ը Շիրակի մարզի Գյումրի քաղաքում տեղի ունեցավ «ՔՀԿ-ների հզորացում՝ հանուն ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խարանի և խտրականության նվազեցման» դասընթացը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ի կողմից՝ «ՔՀԿ-ներն ու ՁԼՄ-ներն առաջնագծում՝ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականության վերացման նպատակով» ծրագրի շրջանակներում:

Դասընթացի ընթացքում ներկայացվեցին հետևյալ թեմաները՝ «Մարդու իրավունքներ. տեղական և միջազգային օրենսդրություն և կոնվենցիաներ», «Խոսքի ազատություն և ատելության խոսք», «Խարան և խտրականություն», «Խոշտանգում»: Ներկայացված թեմաները ներառում էին և տեսական, և գործնական աշխատանքներ, տեսահոլովակների դիտում, իրավիճակային խնդիրների քննարկումներ, խմբային աշխատանքներ, դերախաղեր, աշխույժ քննարկումներ և բազմաթիվ այլ հետաքրքիր և ուսուցողական աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ դասընթացն անցավ հագեցած, ակտիվ և աշխույժ մթնոլորտում: Մասնակիցները մեծ հետաքրքրությամբ մասնակցեցին բոլոր աշխատանքներին ու քննարկումներին: Ավարտին բոլոր մասնակիցներին շնորհվեցին մասնակցության վկայականներ:
Դասընթացն իրականացվել է «ՔՀԿ-ներն ու ՁԼՄ-ներն առաջնագծում՝ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականության վերացման նպատակով» ծրագրի շրջանակներում Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանատան, Անցումային Առաջխաղացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ»

2017թ.-ի սեպտեմբերի 12-20-ը, Լեհաստանի Գդանսկ քաղաքում «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչները մասնակցեցին Erasmus+ ծրագրի շրջանակներում իրականացվող «Ճանապարհորդություն դեպի ընմբռնում և ընդունում» հակախտրականության դասընթացին:

Դասընթացի նպատակն էր ոչ-ֆորմալ կրթական մեթոդներով նախապատրաստել դասընթացավարների նոյեմբերին կայանալիք երիտասարդական փոխանականակման համար: Դասընթացը հագեցած էր տեղեկատվությամբ, արդյունավետ և հետաքրքիր աշխատանքով, լեցուն էր էներգիայով և մեծ տպավորություններով: Բացի շենքի ներսում իրականացվող կրթական, միևնույն ժամանակ զվարճալի ու հետաքրքիր աշխատանքներից, դասընթացը ներառում էր նաև բացօթյա հետաքրքրաշարժ և ուսուցողական գործողություններ, ինչպիսիք են առագաստանավով նավարկության թիմային աշխատանքը, ուսուցողական զբոսանքը քաղաքով և հանդիպումները հասարակության խոցելի խմբերի՝ ԼԳԲՏԻՔ+ անձանց և համայնքների, հաշմանդամություն ունեցող անձանց, ԹՆՕ-ների, միգրանտների և փախստականների և այլ խոցելի խմբերի հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների՝«Տոլերադո» ՀԿ-ի, «Սոպոտ ինտեգրման և աջակցության կենտրոն»-ի, «Իմիգրանտների խորհուրդ»-ի հետ: Հանդիպումների ժամանակ մասնակիցներին ներկայացվեցին տվյալ կազմակերպությունների գործունեությունն ու աշխատանքը՝ ուղղված խոցելի խմբերի խնդիրների և կարիքների բացահայտմանը և լուծմանը: Սա շատ օգտակար հնարավորություն էր մասնակիցների համար՝տեսնելու և մտածելու, թե այդ գործողություններից որոնք արդյունավետ ու կիրառելի կլինեն իրենց երկրներում: Ընդհանուր առմամբ, դասընթացն ուսուցողական էր, ակտիվ և հագեցած օգտակար տեղեկատվությամբ՝զինելով մասնակիցներին անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով գալիք երիտասարդական փոխանակումը վարելու համար:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԻՐԱԶԵԿ ԵՆ՝ ՀԱՆՈՒՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Գյումրի քաղաքում 2017 թ.-ի սեպտեմբերի 26-28-ը իրականացրել է «Խտրականության արգելք՝հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով դասընթացը, որին մասնակցել են ՀՀ Առողջապահության, Մշակույթի, Տարածքային կառավարման և զարգացման, Կրթության, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների ներկայացուցիչները:

Դասընթացի նպատակն է բարձրացնել մասնակիցների զգայունությունը ԼԳԲՏԻ խնդիրների նկատմամբ՝ ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների խախտումների և պաշտպանության մեխանիզմների, նրանց նկատմամբ կիրառվող խտրականության և ատելության խոսքի դրսևորումների կանխարգելման մասին:

Դասընթացի առաջին օրը իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը մարդու իրավունքների հասկացությունը, ծագումը, սերունդները մարդու իրավունքների պաշտպանության տեղական և միջազգային կառույցները և կազմակերպությունները ներկայացնելուց հետո հանգամանորեն խոսել է Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակի, ԼԳԲՏ անձանց առնչվող իրավական փաստաթղթերի և Հայաստանի ստանձնած պարտավորությունների, ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների իրավական կարգավորումների մասին:
«Խոսքի ազատություն, ատելության խոսք» թեմայի շրջանակում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Անահիտ Մկրտչյանը դասընթացի երկրորդ օրը ներկայացրել է «Խոսքի ազատություն», «Ոչ նյութական բարիքների հասկացությունը» և «Վիրավորանք, զրպարտություն, ատելության խոսք» թեմաները: Այնուհետև անդրադարձել է ատելության խոսքի քրեաիրավական հետևանքներին, պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգին և և պայմաններին:

Երրորդ օրը մասնակիցները խտրականության հարցերով փորձագետ Անահիտ Չիլինգարյանի հետ հավասարության և խտրականության տեսությունը տեսությունը քննարկելուց հետո անդրադարձել են խտրականության համընդհանուր արգելքին և խտրականության տեսակներին, խտրականության արգելքով պաշտպանված հիմքերին և խտրականության արգելքի վերաբերյալ միջազգային ու ներպետական իրավակարգավորումներին:
Դասընթացը հագեցած էր գործնական խաղերով և քննարկումներով, թեմատիկ նյութերի դիտումով և քննարկումով:



2017 թ.-ի սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ երկար սպասված Տրանս խոհանոցը: Նախաձեռնության նպատակն էր այցելել Տրանս* անձանց բնակարաններ, իմանալ աղցաններ պատրաստելու նոր բաղադրատոմսեր և միասին պատրաստել մի հետաքրքիր աղցան, որը որոշեցինք անվանել «Կուկա»:*
Ընթացքում նաև զրուցել ենք համայնքի կարիքների ու խնդիրների մասին: Նաև քննարկել ենք, թե որոնք են այն միջոցառումներն ու հանդիպումները, որոնք կմոտիվացնեն Տրանս համայնքին և կխթանեն նրանց ակտիվ մասնակցությունը քաղաքացիական տարբեր նախաձեռնություններին:*

Տրանս խոհանոցի հանդիպումները լինելու են շարունակական:*